ԱԶԳԱՅԻՆ

ՄԵԾ. ՄԿՐՏԻՉ ՍՈՒՐԱԲԷԿԵԱՆՑ.

Մեր Նազարեանցի սիրելի ազգայիններէն մին՝ Մեծ. Մկրտիչ Սուրաբէկեանց՝ ի նպաստ նորաբաց Թեմ. դպրանոցին Նազարեանայ հինգ հազար ռուբլի նուիրեց, որոյ մէջ Սուրաբէկեանց սան անուամբ որդեգիրք պիտի ուսանին միշտ յիշեալ գումարի տարեկան տոկոսօք։

Վսեհ. Հայրապետ յատկապէս օրհնութեան և շնորհակալութեան Կոնդակ ուղղեց յիշեալ ծերունազարդ բարեպաշտ անձին։

Որք ազգային մանկտւոյն մտաւոր զարգացմանց և լուսաւորութեանց և բարոյական կրթութեանց ջանադիր և նուիրամտոյց կհանդիսանան, նոցա առաքինութիւնք միշտ պանծալի, և բազում գովեստից արժանի են, ինչպէս է վերոյիշեալ բարերարին, որում և երախտապարտ պիտի մնան Նազարեանցի ուսումնակարօտ մերազնեայ մանկունք, և պիտի օրհնեն և անմահացնեն նորա ցանկալի անուն և գովելի յիշատակը։

Ուստի Արարատայ իղձ և սիրելի է յոյժ հրապարակական խօսին շնորհակալեաց հաւաստիքը մատուցանել յիշեալ բարերարին, և հռչակել ի լուր և ի մխիթարութիւն համայն Ազգայնոցս։

Այս առթիւ յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմք Նազարեանի Քահանայից դասէն բարեկրօն Մելքիսեդէկ քահանայ Քալանթարեանցին, և կը գովեմք նորա ջանքը յայսմ մասին։

ՕԳՈՍՏ. ՇԱՀՆ Ի ՏՓԽԻՍ.

Պարսից Օգոստ. Նասրէտտին Շահն՝ Եւրոպիոյ ուղեւորութենէն վերադառնալով՝ հանդիպեցաւ ի Տփխիս, ուր և մըտաւ ընդ արշալոյսն ի 17ն ամսոյս։

Սրբազնագոյն Հայրապետ մեր՝ անձնական տկարութենէն ստիպեալ՝ ի մեծ ցաւ սրտի իւրոյ՝ չկարաց անձամբ երթալ, ուստի ի դիմաց իւրոց ի Տփխիս առաքեց զիւր Հոգեսուն որդի Գեր. Ստեփան Եպիսկոպոս Մանտաշեանց ընդ թարգմանի իւրոյ Գ. Նիկ. Տէր-Յովսէփեանց և ընդ համարակալի Սինոդի Գ. Յով. Հովուեանց։

Նորին Գերապատուութիւն՝ ի 18-ն ամսոյս զկնի միջօրէի՝ ընդ ուղեկիցսն պատիւ ունեցաւ Նորին Արքայական Մեծութեան Արեգակնափայլ Շահին, ներկայանալ, (որ-Շահն-ոտից վերայ ընկալաւ և անդ ներկայ էին Բարձրապատիւ Սադրազամն և այլ պալատականք,) և մատոյց Վսեհ. Հայրապետի գրութիւնը,-որով Հայրապետ մեր ուրախակից լեալ կշնորհաւորէր Շահի բարեյաջող ճանապարհորդութիւնը և ի Կովկասեան աշխարհ ողջամբ մուտը, կ՚յայտնէր իւր և համայն Ազգիս համակրութիւնքը և բարեյոյս իղձերը Պարսկաստանի համայն ժողովրդեան մանաւանդ Հայոց անդորր և երջանիկ կենցաղավարութեան և բարգաւաճանաց մասին՝ շնորհիւ հայրագութ և ժողովրդասէր ջանից և խնամոյն, միանգամայն կբարեմաղթէր բարի ճանապարհ և անվտանգ ժամանումն ի հայրենիս իւր և յԱթոռանիստ Մայրաքաղաքն և այլն։

Օգոստափառ Շահն սիրալիր համակրութեամբ ընդունեց Վսեհ. Հայրապետի

նամակը և խորին ուշադրութեամբ լուաւ Գրը. Սահիան Դպիս. Թրքերէն լեզուաւ խօսած խօսքերը և բարեմաղթութիւնքը ի դիմաց Վ. Հ. Հայրապետի, զորս ինչպէս և միւս խօսակցութիւնքը Միրզա Հիւսէյին Խան Վ. սեմ. Սատրապին Պարսկերէն լեզուաւ կհաղորդէր, և Թրքերէնով կիսխանակէր Շահին պատասխանիքը։

Նորին Ընքայական Անձութիւնն հարցանելով Սրբազնագոյն Հայրապետի որպիսութիւնքը՝ ցաւ զգաց անձնական տրկարութեան համար և մաղթեց առողջութիւնը, միանգամայն յայտնեց՝ զի եթէ ընդ Երևան ճանապարհորդելն յաջողէր՝ մեծ փափաք ունէր անշուշտ Էջմիածին հանդիպելոյ և զ Հայրապետն տեսանելոյ։

Ի 19-ն զկէսաւուրը մեկնեցաւ Օգոստ. Շահն ի Տփխիսայ, և ուղևորեցաւ դէպի Ռագու ծովեզերեայ քաղաքն և անտի ընդ Կասպից ծովն անցանել ի Պարսկաստան։

ԳՐԻԳՈՐ Ճ. ՏԻԼՏԱՐԵԱՆՑ.

Ի նպաստ պիտոյից նորաշէն Հ'եմարանի Ս'այր Աթոռոյս՝ Ռագուելցի Սեծ. Գրիգոր Յովհաննէսեան Տիլտարեանց յԹուրքիա. նուիրեց։

Յիշեալ բարեսէր անձն քանի տարիներէ հետէ այլ և այլ նուիրատուութեամբք յիշատակներ թողուցած է աստի Ս. Աթոռս, և միշտ մեր շնորհակալութիւնքը ընդունած։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՅՍ. (Շ-ր-ն-ի-ն)։

ԵԿԱՏԱՐԻՆԱԴԱՐ	Ռ.	Կ.
Յարութիւն քահանայ Վարդանեանց	10	
Մինաս քահանայ Պապեանց	5	
Գէորգ Զէօփեանց	10	
Միրայէլ Շասպաղեանց	5	
Պետրոս Պետրոսեանց	5	
Յովհաննէս Յարութիւնեան Բաղդասարեան	10	
Դաւիթ Մակարեան Սաֆարեանց	15	
Գէորգ Ղազարոսեան Գասպարեանց	5	
Գրիգոր Յովհաննէսեան Զօզադարեանց	5	
Գրիգոր Յովսէփեան Աղժանեանց	7	
Սարգիս Բարեսեան Պապանեանց	5	
Անտոն Աւանվէրդեանց	5	
Յակոբ Երիցփոխանեանց	10	
Գէորգ Փարմաքեան	5	
Յովհաննէս Պաշմաքեան	2	
Խաչատուր Եարաթիլքեան	10	
Գասպար Խառիլեան	2	
Աստուածատուր Խափիքեան	1	
Աստուածատուր Արզումանեանց	1	
Աւետիք Ելանդիրեան	10	
Ստեփաննոս Կուլնեցեան	2	
Ղազարոս Թորոսեանց	2	
Սարգիս Զայալեանց	2	
Եղբարք Պապարուբեանց	5	
Սարգիս Ալենդունեան Կոռոզլինեան	2	
Յարութիւն Լապաժեռեան	5	
Առաքել Եղեանց	1	
Ղազարոս Պէտելեանց	1	
Յակոբ Մինաբինեան	1	
Օքսէնտ Պահէսարայցի	5	
Ստեփաննոս Տրդատեան	1	
Կոտարատիոս Կարապետեան	2	
Խաչատուր Յարութիւնեան Մուղալեանց	1	
Կարապետ Պարոնեան	2	
Նիկողայոս Օրղինեան	5	
Մանուկ Սիմէօն Սեպաքեան	10	
Մկրտիչ Երիցեանց	5	
Յովակիմ Դեղեբերեանց	5	
Եղիայ Եասպիկեան	1	
Յովակիմ Թորոսեան Ղսինաանեանց	5	
Դանիէլ Պապոխանեան	1	
Մկրտիչ Զուրապեան	1	
Ստեփաննոս Արզամանեանց	5	
Պօղոս Խաչիկեան	1	
Խաչատուր Օրտինեանց	1	
Թորոս Նուրպէնեան	1	
Յովհաննէս Օքալեան	5	
Գալուստ Բոլուրալեանց	5	